**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**
**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՊՐՆ Ա. ԶՈՀՐԱԲՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Զոհրաբյան,

ՀՀ սահմանադրական դատարանը քննության է ընդունել «Լուսինե Ալեքսանյանի, Նարինե Սաքեյանի, Հասմիկ Վարդանյանի եւ Գագիկ Ավետիսյանի դիմումի հիման վրա՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության եւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի», «Կիմ Մինասյանի դիմումի հիման վրա՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածի», «Լիլիթ Մուսեյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի՝ «ի հայտ գալուց հետո» բառակապակցության մասով»՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործերը: Միաժամանակ որոշվել է գործերի դատաքննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով:

Նշված դիմումների վերաբերյալ ՍԴ ներկայացվող՝ ՀՀ փաստաբանների պալատի գրավոր դիրքորոշումները, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի համաձայն, ներկայացնել նիստերից առնվազն 15 օր առաջ, իսկ լրացուցիչ պարզաբանումների դեպքում՝ առնվազն 5 օր առաջ:

Կից ուղարկվում են Լուսինե Ալեքսանյանի, Նարինե Սաքեյանի, Հասմիկ Վարդանյանի եւ Գագիկ Ավետիսյանի դիմումի, Կիմ Մինասյանի դիմումի, Լիլիթ Մուսեյանի դիմումի պատճենները (առդիր՝ 41 թերթ):

Տեղեկացնում ենք նաեւ, որ Լուսինե Ալեքսանյանի, Նարինե Սաքեյանի, Հասմիկ Վարդանյանի եւ Գագիկ Ավետիսյանի դիմումի հիման վրա քննության ընդունված գործով ՍԴ նիստը տեղի կունենա 2016թ. մայիսի 10-ին, ժամը 10.00-ին, Կիմ Մինասյանի դիմումի հիման վրա քննության ընդունված գործով ՍԴ նիստը՝ 2016թ. մայիսի 17-ին, ժամը 10.00-ին, իսկ Լիլիթ Մուսեյանի դիմումի հիման վրա քննության ընդունված գործով ՍԴ նիստը՝ 2016թ. մայիսի 24-ին, ժամը 10.00-ին, սահմանադրական դատարանի նիստերի սրահում (Երեւան, Բաղրամյան պող. 10):

**Հարգանքով**

**Ա. ՀԱԿՈԲՅԱՆ**

4 փետրվարի 2016 թվականի
Ա - 53

ՄՈՒՏՔ № 410-16
05 02 2016թ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ